# ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Քաղաքային «Կումայրի» օրաթերթի հավելված

1991 թ. Մարտ: № 17: Գինը՝ 50 կոպ.

## ԱՂԵՏ

*Ժամանակը Լենինական և Կիրովական քաղաքների, Սպիտակի և Ստեփանավանի շրջանների համար կանգ է առել դեկտեմբերի 7-ի ժ. 11.41 րոպեի սահմանագծում: Խախտվել է բնականոն կյանքը: Շատերն այդպես էլ մնացին իրենց տանը, աշխատատեղում, դպրոցում...*

*Ողջ հանրապետության համար էլ ժամանակն իր նոր հաշվարկն է սկսել: Վիշտը միավորում է մարդկանց, ցավը՝ համախմբում, ու այսօր Լենինականում, Կիրովականում, Սպիտակում, Ստեփանավանում, երկրաշարժ կոչվող այդ արհավիրքից տուժած մյուս շեներում կարելի է տեսնել հանրապետության բոլոր բնակավայրերից իրենց ներքին մղումով եկած հազարավոր մարդկանց, որոնց ցանկությունը վիշտն ու ցավը մեղմելն է, նպատակը՝ օգնել, սատարել տարերային աննախադեպ աղետից տուժածներին, գեթ ինչ-որ բան անել նրանց համար:*

*Աղետի և նրա հետևանքների մասին պատմող բանավոր և պաշտոնական լուրերը, որոնք մեզ սկսեցին հասնել մահաբեր ցնցումներից գրեթե անմիջապես հետո, խիստ հակասական զգացումներ էին ծնում, և բուռն իրականությանը հասու լինելու պահանջին գումարվում էին տագնապը, խուճապը, ցավը:*

*Դեպի Հայաստանի հյուսիսային շրջաններ ավտոճանապարհները լի էին իրենց հարազատներին, հայրենակիցներին օգնության շտապող հազարավոր մարդկանցով և ավտոմեքենաներով:*

*Երևան-Լենինական, Լենինական-Սպիտակ-Կիրովական,*

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)





Լուսանկարները՝ Հ.Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ և Ս. ԳՈՒԼՅԱՆԻ

## Ի հիշատակ աղետի զոհերի

1988-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժը խոր վերք բացեց հայ ժողովրդի սրտում: Անմեղ զոհեր դարձան հազարավորներ, նաև նրանք, ովքեր հասակ էին առնելու, իրենց գիտակցական կյանքը, մտավոր, հոգևոր ու ֆիզիկական կարողությունները նվիրաբերելու հայ ժողովրդին ու հայրենի քաղաքին: Նրանք տարբեր տարիքի էին. մանուկ, պատանի, երիտասարդ, հասուն մարդ և բոլորը՝ երազների ճանապարհին:

Այս ահավոր երկրաշարժից հրաշքով փրկվածները իրենց հարազատներին փնտրելուց ու հողին հանձնելուց հետո չէին կարողանում թոթափել վիշտն ու կսկիծը: Սակայն հարկավոր էր կյանքը շարունակել հանուն անմեղ զոհերի հիշատակի հավերժացման, հանուն նրանց անմահության: Հուշաքարեր ու գերեզմանաքարեր տեղադրվեցին, գրքեր ու հուշալբոմներ տպագրվեցին, սակայն դրանք չէին կարող ամբողջացնել և արտահայտել աննախադեպ արհավիրքի թողած հետևանքները, երազների ճանապարհին իրենց կյանքից զրկված անմեղ զոհերի վկայությունները, լուսանկարներն ու կենսագրությունները:

«Կումայրի» թերթի խմբագրություն էին գալիս իրենց հարազատներին կորցրած մարդիկ, նամակներ էին գրում՝ ինչո՞ւ գիրք-ալբոմներ չեն տպագրվում զոհվածների մասին, ինչո՞ւ «Կումայրի» թերթում հազվադեպ են երևում զոհերի նկարներն ու կենսագրությունները, մի՞թե հնարավոր չէ ինչ-որ ձևով հավերժացնել, պատմության ու սերունդներին թողնել նրանց հիշատակն ու աղետի հետևանքները:

Տասնհինգ զոհ տված «Կումայրի» օրաթերթի խմբագրության կոլեկտիվը ընդառաջելով ընթերցողների ցանկությանը, որոշեց ի հիշատակ բոլոր զոհերի շաբաթը մեկ անգամ հրապարակել «Հիշողություն» հավելվածը՝ պատմության համար, սերունդների համար:

Թղթի և տպագրության թանկացման պայմաններում, ինչ խոսք, դժվար էր իրականացնել հանձնախումբ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

# Ի հիշատակ աղետի զոհերի

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րի այս նախաձեռնությունը: Գտնվեց նաև դրա ելքը:

«Կումայրի» թերթի խմբագրության հանձնախումբը, առանց վարձատրության, հոժարակամ սահմանեց (զոհվածների նկատմամբ պարտքի հատուցում) մշակել խմբագրության հանձնված տեղեկությունները, կենսագրությունները, հավաքել և հավելվածի էջերում զետեղել այն բոլոր արխիվային փաստաթղթերը, լուսանկարներն ու վկայությունները, որոնք տեղ են գտել արտասահմանյան, Միության և հանրապետական մամուլում, հրապարակվել գրքերում և ալբոմներում:

«Հիշողության» վաճառքից և մուծումներից առաջացած գումարը բավականացնում է թղթի գնման, տպագրության և առաքման ծախսերի վճարման համար:

Հարգելի համաքաղաքացիներ, Շիրակի գոտու բնակիչներ, «Կումայրի» թերթի «Հիշողություն» հավելվածը շարունակում է իր ընթերցողներին ներկայացնել քաղաքի և շրջակա բնակավայրերի զոհված դուստրերի, որդիների, նրանց մայրերի, հայրերի մասին լուսանկարներ, հիշատակի խոսքեր, այդ դժնդակ օրերի լուսանկարներ, վավերագրեր: Քանի որ խմբագրությունում այսօրվա դրությամբ հանձնվել են զոհվածների ավելի քան 5000 լուսանկարներ և համառոտ կենսագրականներ, գրանցվել են ու համարակալվել, ուստի ուշացման համար անհանգստանալու հարկ չկա: Այսուհետև էլ կընդունվեն և տպագրության համար կներբագրվեն աղետի զոհերի վերաբերյալ բոլոր լուսանկարներն ու կենսագրականները և հերթականությամբ կտպագրվեն «Հիշողությունում»:

Այո, «անցյալը պետք է դառնա դաս»: Իսկ «Հիշողությունը» միայն կորուստների պատմություն չէ: Հավելվածի էջերում մեծ ծավալով տեղ կհատկացվի նաև նրանց, ովքեր մեր վշտի մեջ մեզ մենակ չթողեցին:

Որպես վերջաբան հիշենք Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի խոսքը. «Եվ մեր ո՞ր մեղքերի համար այս ամենը, Տեր Աստված»:

# ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԱՐՀԱՎԻՐՔԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ






Լուսանկարները՝ ՎԱՀԱՆՏԻՆ ԿՈՏՈՎԻ

